Հաստատում եմ՝

Քննական հանձնաժողով_______________

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

«ԳՅՈՒՄՐՈՒ №23 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆ

«Համայնքի էկոլոգիական խնդիրների լուծման ուղիները»

Տևողություն 9 շաբաթ/9 ժամ/

Մասնակիցներ՝ IX դասարան

2025-2026 ուստարի

II կիսամյակ

**Ուսումնական նախագծի ղեկավարներ՝** **Գ.Միրոյան**_______________

**Ա. Գևորգյան** _______________

**Մ.Ավետիսյան**_______________

| **Թեմա՝ Համայնքի էկոլոգիական խնդիրների լուծման ուղիները**<br>Առարկաներ՝ աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն | |
|---|---|
| **Ուսումնական տարի** | 2025-2026 |
| **Քննական նախագծի անվանում՝** | Համայնքի էկոլոգիական խնդիրների լուծման ուղիները |
| **Տևողությունը/ շաբաթների քանակը՝** | 9շաբաթ |
| **Նախատեսված ժամաքանակ** | 9ժամ |
| **Նախագծի իրականացման փուլեր՝ ժամաքանակով** | 1.Ինչո՞ւ է կարևոր շրջակա միջավայրի պահպանությունը: Ի՞նչ էկոլոգիական խնդիրներ կան մեր համայնքում:(1ժամ)<br>2.Որո՞նք են այդ խնդիրների առաջացման հիմնական պատճառները:(1ժամ)<br>3.Ինչպե՞ս է կենցաղային, արդյունաբերական և շինարարական թափոնների ոչ ճիշտ կառավարումը ազդում շրջակա միջավայրի վրա:(1ժամ)<br>4.Ինչպիսի՞ միջոցներ կարելի է կիրառել համայնքի մաքրությունը պահպանելու համար:(1ժամ)<br>5.Ի՞նչ դեր ունեն դպրոցը և աշակերտները բնապահպանական խնդիրների լուծման գործում:(1ժամ)<br>6.Հանդիպում մարզպետարանի «Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության» աշխատակիցների հետ: (1ժամ)<br>7.Ի՞նչ առաջարկներ կարելի է ներկայացնել համայնքի էկոլոգիական վիճակը բարելավելու համար(1ժամ)<br>8. Բուկլետի և տեսանյութի ստեղծում(1ժամ)<br>9.նախագծի ներկայացում(1ժամ) |

**Նախագծի նպատակը**

Ուսումնասիրել համայնքում առկա էկոլոգիական խնդիրները (աղբի կուտակում, օդի և ջրի աղտոտում, կանաչ տարածքների պակաս և այլն), պարզել դրանց առաջացման պատճառները և առաջարկել արդյունավետ միջոցներ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման համար: Միաժամանակ ձևավորել սովորողների պատասխանատու վերաբերմունք բնության և համայնքի նկատմամբ:

**Նախագծի վերջնարդյունքները**

- Ձևավորել սովորողների մոտ ինքնուրույն և կրթական գործում ակտիվ մասնակցություն
- Ձևավորել ոչ միայն գիտելիքներ, այլ այնպիսի հմտություններ, որոնք սովորողները կկարողանան կիրառել իրենց պրակտիկ գործունեության մեջ
- Զարգացնել հետազոտական, ստեղծագործական, որոնողական հմտություններ աշակերտների մոտ
- Զարգացնել սովորողի ճանաչողական հետաքրքրությունը
- Ապահովել կյանք - կրթություն իրական կապը
- Ներկայացնել համայնքի էկոլոգիական հիմնախնդիրներն ու առաջարկել դրանց լուծման ուղիներ:
- Մեկնաբանել աղբավայրից արտանետվող գազերի ազդեցությունը հարակից թաղամասերի բնակիչների առողջության վրա:
- Գիտակցել սեփական անձի դերը շրջակա միջավայրի պահպանման գործում:

**Առարկայի/ առարկաների այն թեմայի(թեմաների) վերջնարդյունքները, որոնց վերաբերվում է նախագիծը**

- Բացահայտել համայնքում առկա հիմնական էկոլոգիական խնդիրները և այդ խնդիրների առաջացման պատճառները և հետևանքները:
- Վերլուծել մթնոլորտի էկոլոգիական նշանակությունը, աղտոտման պատճառներն ու հետևանքները:
- Թվարկել օդի հիմնական աղտոտիչները, ինչպիսիք են ածխածնի(II) օքսիդը, ծծմբի(IV) օքսիդը և ազոտի օքսիդները:

- Քննարկել, թե ինչպես է միջավայրի էկոլոգիական գործոնները ազդում մարդու նյարդային, սիրտ-անոթային, շնչառական, հենաշարժիչ, վերարտադրողական և այլ համակարգերի գործունեության վրա:
- Վերլուծել էկոլոգիական խնդիրների ազդեցությունը բնակչության կյանքի, առողջության և տնտեսության վրա
- Առաջարկել էկոլոգիական խնդիրների լուծման գործնական ուղիներ
- Ձևավորել բնապահպանական մտածողություն և պատասխանատվություն համայնքի նկատմամբ:

**Հիմնախնդիրը կամ մարտահրավերային հարցը**

Հիմնական մարտահրավերն այն է, թե ինչպես կարելի է բարձրացնել համայնքի բնակիչների բնապահպանական գիտակցությունը և ներգրավել նրանց շրջակա միջավայրի պահպանության գործում:

**Ուղղորդող հարցեր**

- Ի՞նչու է կարևոր շրջակա միջավայրի պահպանությունը:
- Ի՞նչ էկոլոգիական խնդիրներ կան մեր համայնքում:
- Որո՞նք են այդ խնդիրների առաջացման հիմնական պատճառները:
- Ինչպե՞ս են էկոլոգիական խնդիրները ազդում մարդկանց առողջության և բնության վրա:
- Ինչպե՞ս է աղբի ոչ ճիշտ կառավարումը ազդում շրջակա միջավայրի վրա:
- Ինչպիսի՞ միջոցներ կարելի է կիրառել համայնքի մաքրությունը պահպանելու համար:
- Ինչպե՞ս կարող են ծառատունկը և կանաչապատումը բարելավել համայնքի էկոլոգիական վիճակը:
- Ինչպե՞ս կարող են համայնքի բնակիչները մասնակցել շրջակա միջավայրի պահպանությանը:
- Ի՞նչ դեր ունեն դպրոցը և աշակերտները բնապահպանական խնդիրների լուծման գործում:
- Ի՞նչ առաջարկներ կարելի է ներկայացնել համայնքի էկոլոգիական վիճակը բարելավելու համար:

**Ուսումնական նախագծի նկարագիրը**

- Նախագծի թեմայի ընտրություն
- Հիմնահարցի ձևակերպում
- Աշխատանքային խմբերի ձևավորում. Հիմնախնդրի հիմնավորում
- Հետազոտական հարցերի առաջադրում և աշխատանքի բաշխում
- Խմբերի ինքնուրույն աշխատանք , հետազոտություններ
- Ստացված արդյունքների միջանկյալ քննարկումներ
- Կատարված աշխատանքի արդյունքների ներկայացում
- Անհատների և ամբողջ խմբի աշխատանքի արդյունքների գնահատում
- Գործողությունների ծրագրի առաջարկ

**Ուսումնական նախագծի արտադրանքի/պրոդուկտի ներկայացման տեսակներ**

| | |
|---|---|
| ☐ Ամսագիր կամ թերթ,պաստառ | ☐ Վեբ-կայք |
| ☐ Տեղեկատվական թերթիկ | ☑ Սահիկաշար, տեղադրում դպրոցի/համայնքի կայքէջում |
| ☑ Տեսանյութ | ☐ Համակարգչային խաղի ստեղծում |
| ☐ Ձայնվածք (փոդքասթ) | ☑ Բուկլետ |
| ☐ Դասընթացներ | ☑ Կլոր սեղան քննարկում |
| ☐ Ցուցահանդես | ☐ Ֆլեշմոբ/ տարածում կայքերում |
| ☑ Առաջարկ պատկան մարմիններին | ☑ Նամակ/ ուղերձ |

**Հետազոտության աղբյուրներ**

*Հայաստանի աշխարհագրություն 9-րդ դասարանի դպրոցական դասագիրք:*
*Բնագիտություն դասագիրք (բնական աղետների թեմաներ):*
*Հայաստանի աշխարհագրական ատլաս և քարտեզներ:*
*Պաշտոնական և գիտական աղբյուրներ*
*ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն (Փրկարար ծառայություն) – բնական աղետների և [illegible] կանխարգելման վերաբերյալ տեղեկատվություն:*

| |
|---|
| *ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն – կլիմայական և բնապահպանական տվյալներ:*<br>*Հայաստանի սեյսմիկ պաշտպանության ծառայություն – երկրաշարժերի ուսումնասիրություններ:*<br>*Հայաստանի մարզերի բնության և ռելիեֆի մասին տեղեկություններ –*<br>https://www.armgeo.am/shirak/� �<br>Armenian Geographic - ArmGeo.am<br>*Վիքիպեդիա և այլ կրթական կայքեր Հայաստանի բնակավայրերի և բնական պայմանների մասին (օրինակ՝ Շիրակի մարզի գյուղերի վերաբերյալ տվյալներ)* �<br>*Wikipedia +1*<br>*Կրթական հոդվածներ և ուսումնական կայքեր բնական աղետների տեսակների մասին:* |
| **Գիտելիքի ստուգման եղանակը/թեստ, գրավոր և այլն/** |
| **թեստ** |